ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք,
հասցե. Գ. Ամասիա, փողոց 26, շենք 19
հեռ. /0246/-2-23-10
էլ.փոստ. amasia.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 23 >> դեկտեմբերի 2016 թվականի N 14-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 10- Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 37.80 տոկոսի չափով՝ 250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի ղեկավարի 2016 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանելու մասին» թիվ 10-Ա որոշումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ (14)	դեմ (0)	ձեռնպահ (0)
1.Արտեմ Դավթյան			
2.Մանվել Խոջումյան			
3.Արա Հարությունյան			
4.Տիգրան Հարությունյան			
5.Սերոբ Ղուկասյան			
6.Կարապետ Մելքոնյան			
7.Արման Միրզոյան			
8.Հայկ Նիկոլյան			
9.Վարդան Պապիկյան			
10.Անդրանիկ Վարդանյան			
11.Ալեքսան Քոչոյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«23» դեկտեմբերի 2016 թվական
գյուղ Ամասիա